

ԽՈՒՄԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ԲՆԱԿԱՆ

Ահա ստիպուած իմ խորին ուրախութիւնից՝ սլանում եմ մտաւորական թևերի վրայ դէպ ՚ի ձեզ ներկայ գրութեամբս, և յոյս ունիմ՝ որ կ'ըրարե՛հա՞միք սորան հաղորդել իմ հայրենակից եղբարց՝ Չեր պատուական ամսագրի միջոցաւ: Եւ իմանալով որ ինչպէս տեղոյս բնակչաց համար ուրախութիւն է պատճառում սոյն "Վարդապետական ընկերութեան" գործունէութիւնը, նոյնն էլ աւելի ուրախութիւն կ'առթէ մեր բացակայ եղած ազգակիցների սրտերի մէջ. ըստ որում Հայ եկեղեցիական հիմնարկութեանց բարեկազմը և հրահայտը յառաջադիմութիւնները պէտք է ցանկանք, խորութիւն չ'ընելով, որ մեր պատուական Հայ եղբարքը բացակայ են գտնուում միմեանցից զանազան տեղերում՝ հեռաւոր մղոններով, Բայց՝ նորա՝ ուր որ լինին, պէտք է զիտնան, որ բոլորը մի ազգ են բաղկացնում ու ամենը կոչվում են Հայ. Հայ անունը մեկի վրայ անհատարար չէ կրվում, այլ սեռօրէն բոլոր Հայոց ազգի վրայ: Արեւմտեան երկրներ ըստ մեր մէկ քաղաքի մէջ եղած Բաբելոնիաները, Երուսաղէմի Երուսաղէմի և Երուսաղէմի Երուսաղէմի մի և նոյն է թէ բոլոր Հայկական ազգին է վերաբերում, Եթէ մենք լքուում ենք մեր ազգակիցներից մեկի յառաջադիմութիւնը մէկ որպիսի և իցէ բարի գործոյ մէջ, և վերջապէս, եթէ մեր ականջներին է հասնում նորա ազգօրուտ գործունէութիւնը Հայկական լուսաւորութեան համար, նա ոչ միայն իրա համար պէտք է լինի փառք և պարծանք, այլ բոլոր Հայկական ազգին, եկեղեցւոյ և նորա ազգաց սերունդոց. ըստ որում ինչպէս ասացինք, բոլորն մի ազգ ենք, համարիւնակից և մի ընդհանուր անուն կրող մեզ վրայ Հայ և Հայրենիք: Այս մի և նոյն հասարակական տիտղոսն ևս արդէն կենդանացած էր Յունաց (Ուլիսիան)՝ մտա գտնվող յաղթահարողների (ПОБЕДИТЕЛЕ) մէջ, որոնք իրանց կործանութեան և քաջամարտութեան համար վարձատրվում էին գեղեցիկ և թանկագին

գարնեայ պսակաւ, որն որ ոչ միայն նոյն իսկ լուսաւորութի (ԱՄԼԵՏԵ) համար էր զարդարանք և փառք, այլ բոլոր քաղաքի, ուր նա ծնուած և սնուած է եղել և այլն:

Բայց յայտնի է "Հայկական աշխարհի" 3 և 4 համարների ուշիմ ընթերցողների, որ Վարդապետական ընկերութեան նախագահի Պ. Գ. Ռոստոմեանցի վախճանելոյց յետոյ՝ ընտրուել է ՚ի տեղի նորա նախագահ—անդամ ընդհանուր ժողովով և բոլոր անդամաց համակրութեամբ գերազնի Վոլֆէս Զոհրապեանցն, որն քաջ յայտնի է մեզանից շատերին իր օգտակար գրաւոր աշխատանքներով: Այս ընկերութեան նախագահ և նորա ընկերակցաց ջանքը և Հայկական լուսաւորութեան գործունէութիւնը՝ ես չեմ վստահանում նկարագրել և զարդարել համապատշաճ ածականներով, այլ միայն թողնում եմ՝ որ սոցա գործոց պտուղները ինքնին ասարեզ գուրս գան և հնչեն բոլոր Հայերի ականջներում: Կեցցէ յաւերս հասարակական ընկերութեան, Ընկերութեան անդամաց թիւը՝ որ հրատարակված է 1869 ամի Վեդուի, 25 համարումը, բաց ՚ի նորանից այս նոր ընտրուութեանից յետոյ աւելացել է յիսուն անխոփոխ անդամ ևս, որոնցից 30ը Ղուբայումն են ստորագրված մեր նորընտիր նախագահի միջնորդութեամբ, իսկ 20ը այս տեղ մեր Բագու քաղաքում ընկերութեան խորհրդոց գործունեայ անդամների միջոցով, Այս ազգասեր Պարոնների անուանքը, ազգանուանքը և նոցա քնքրյշ սրտից բղխած նուիրատուութիւնքը կըփութվամ հաղորդել իմ աղնիս Հայերին: Այժմ թող ներեն ինձ իմ սիրելի Հայերը, որ ընկերութեան հսկայաբայլ գործունէութեան վրայով հարեանցի անցնելով, կամենում եմ այս անգամ միայն ՚ի լոյս հանել ընկերութեան այն տնօրինած վճիռներից մէկը, որ եղել է մտա ժամանակներս:

Վարդապետական Բնկ. խորհուրդը Մայիս ամսոյ 13 ին արդէն վճռել էր առանձին օրագրական սահմանագրութեամբ, որ իւրաքանչիւր տարի հանդիսաւոր կերպիւ մայիսի 21ին կատարեն եկեղեցւում ընկերութեան հաստատման տարեգարծը ՚ի ներկայութեան բոլոր անդամաց, որոնք անձամբ

(\*) Ոլիսեցիայ է մայրաքաղաք Երուսաղէմ, որն իրա տեղի գրութեամբ գտնվում է հարստային զոնտասանի արևմտեան կողմում:

ներկայ են գտնուում այս տեղ՝ գոհացողական մնալ՝ մանր կատարել վասն երկարութեան կենաց Վայսեր Արդէն յայտնված էր քաղաքում, որ նոյն աւար 11 դ ժամին պատարագ կ'մատուցանվին նուրազէն Առաւորչեան եկեղեցում՝ Ընկերութեան տարեկարծի համար Այս երբ հասաւ այս խորհրդաւոր ժամը պիտոյ էր միանդամայն տեսնել՝ թէ ինչքան բազմութիւն էր ժողովուրդ այս մեծ հոյակապ և յայնատարած եկեղեցին. որոնց խրաքանչիւրի ճակատի վրայ կարծես նկարագրված էր ուրախութեան նշաններ Այս բազմութեան մեջ տեղը կանգնած էին նոյնպէս Վարդատիրական ընկերութեան ուսումնարանի օրիւրայնիւրը որոնք անմեղութեան նշաններ կրելով խրեանց վրայ գրեթէ՛ ուրախութեան արօտաւայ կամիլներ կը հոսեցնէին ամեն մի բարեխրոտ Հայի աչքերից։ Իսկ մեր պատուական անդամների հոգեացած խօսքերը և վառվառն սերը զէպ ի Ազգը, կ'ներկայայնէին բոլոր ժողովուրդը առաջ՝ կարծես հինգերորդ Գործը որտեղ իրեւ պարագուս Հայկական լուսաւորութեան՝ հանդէս էին դուրս եկել Սահման Գարթե և նորա ընկերակից սուրբ Վերտոյը։ Պատարագիչն էր տեղոյս Արժ. Թագեոս Աւագ Բահանայն Բուրազեանց. որ զկնի պատարագին սկսաւ գեղեցիկ և այս հանգիսին յարմար ատենարանութիւն, որի բնարանն էր Աղիշէի ընտիր մատենադրից "Միութիւնն է մայր բարեաց և ըն". որոյ մեջ ապացուցանում էր թէ՛ ինչ նշանակութիւն ունի ընկերութիւնը և ինչպիսի օգուտներ է բերում մարդոց յառաջխաղացութեան մասին թէ՛ գրականական և թէ՛ քաղաքական ասպարիզի մեջ։ Զկնի սորա կատարեցաւ մեծ շքեղութեամբ Վայսեր կենաց և բարօրութեան համար գոհացողական մնալ՝ մանր ժամից յետոյ բոլոր անդամները, նոյնպէս հոգեորականը հրաւիրվեցան ՚ի ճաշ՝ նոյն Ընկերութեան անդամը՝ Պ. Գրիգոր Թումանյանցի տուն, ուր պատրաստած ունէին մի բանի երաժշտական քաղցրածայն մանկատիւր, ժամը 3-ին բոլորը նստան ՚ի ճաշ. քառորդ ժամից յետոյ՝ մեր յարգոյ Պարոնայքը շանդանայ շողջողուն բաժակներ դարձրեցին Վայսեր և Փոխարքայի կենաց և երկարատեւութեան համար։ Զկնի սորա ամենքը սորի վրայ կանգնած բաժակներ

իրար խփելով՝ թնդեցրին բոլոր դահլիճը (զար) ասելով "Անցէ՛ Վահագա Վաթուղիկան ամենայն Հայոց Գեորգ Գ. շատ տարիներ ՚ի լուսաւորութիւն Ս. Եկեղեցոյ մեր և Հարկեանց", Սորանից յետոյ, երբ պէտք էր կրկին բաժակներ դարձրելին մեր նոր-ընտիր Նախագահի կենաց, այս միջոցին կարգալի այս տեղ մի համառօտ ճառ, որն ահա՛ աւարում եմ Ձեզ այս նամակի հետ հարդրելու իմ քնքոյջ ազգակիցներին, Ամ ճառախօսութեան ժամանակը բոլոր երաժիշաները արդէն պատրաստի կանգնած էին իմ շուրջս զկնի աւարտման ճառի՝ խփոյն սկսան երգել քանի մի աղջոյն երգեր զուարճացնելու զբազմութիւնն, որոց անուանքը կարելի է տեսնել ճառի ծանօթութեան մեջ։ Այս երգերից յետոյ մեր Նախագահ Պարոն Զոհրապեանցն մի անպատմելի ուրախութեամբ լի՝ սաքի կանգնած, ու դանաւրով զէպ ի հնձ՝ արտաբերեց իր սրտի խորքից այս յետագայ խօսքը. "Աս բոլորովին ուրախ լինելով Ձեր աշխատասիրութեան և երախտապիտութեան բարենպաստակ գործոց համար, խոստանում եմ նուիրել Ձեզ մինչև ՚ի Ձեր ուսման ընթացքը աւարտելն խրաքանչիւր տարի 50 բուրջի իմ սեփհականութիւնից", նոյնպէս բաժակներ դարձրեցին Ընկ. ներկայ և բացակայ եղած անդամների կենաց, ցանկալով սոցա անկեղծ սեր և անյողողոյ միաբանութիւն զէպ ի Ազգն Հայոց, Եւ այսպէս վերջացաւ պատուայ հանդէսը բաւական լաւ և ներդաշնակաւոր երգատաղութեամբ։

Եկէք ուրեմն իմ ազնիւ Հայեր, սիրելի եղբայրներ և սիրուն քոյրեր, բարեմաղթե՛նք այս ընկերութեան\*) անդամներին բարեբաատիկ օրեր և

(\*) Այս ընկերութեան սրբազան պարտաւորութիւնն է՝ օղնել առհասարակ մեր ուսումնական արտմանկտեայը, ուր որ կը լինին. յայց տակաւին մանակ լինելով իր գրամական օրօրոցում, միայն կարողանում է տեղոյս երկեսն մանկտեայը յառաջ տանել գրականական ասպարիզի մեջ, յուսալով, որ Սորա Նախագահի և իւր ընկերակիցայ աշխատասիրութեամբ ընկերութեան գործունեութեան ընթացքը յառաջ բայելով, շուտով կարող է նպաստել մեր բացակայ գանձող ցրտոր Հայադն մանկանց եւս։

չատ տարիներ, և ցանկանք սոցա ձեռնարկու-  
թեանցը հսկայաբայլ յառաջադիմութիւն, որ ա-  
ւելի զօրութեամբ՝ իբրև կենդանարմատ ծառ՝  
ածէ, զօրանայ և հարիւրաւոր չափով պտղաբեր  
լինի ՚ի նպաստ և ՚ի պարծանս Հայկազանց և նո-  
րա Ս. Եկեղեցւոյն:

Որդեկիր Մարդասիրական Ընկերութեան

Աւագ Գրիգորեանց:

է 1870 թի 5 - ն Յունիս

Ի ԲԱԳՈՒ:

**ԽՈՒՆՏԻՐՈՒՄԻՆԻ ԱՐԱՐԱԿ ԱՆՈՒՐՈՅ**

Հանգուցեալ Հայրապետն ամենայն Հայոց Մատ-  
թէոս՝ յետ զայստեան իւրոյ ՚ի Տիփլիս ՚ի 1869 ամի,  
և յետ ծանօթանալոյ ընդ իս՝ յաւուր միում ՚ի  
մէջ բազմախումբի հանդիսականաց հոգևորակա-  
նաց և աշխարհականաց յանձն արար ինձ զեր-  
կուս ձեռագիր տետրակս ասելով. "Այս տետրակ-  
ները առ, լաւ կարդա և սրբագրէ՝ առանց երես-  
պաշտութեան, և շուտով զրկէ Էջմիածին, որ  
տպել տամ". յիրաւի վեհանձնական էր հրաման  
Հայրապետին, այլ վախճանն ոչ համաձայն նմին:

Ես զայնտպիկ տետրակս գննեալ գտի անդէպ  
հրատարակութեան ըստ պարունակեալ ՚ի նոսա  
նիւթոցն անտեղութեան և ըստ պիտոյից ժամա-  
նակին, վասնորոյ և զանց արարի զսրբագրութեամբ  
նոցին. սակայն կրկին հրամանք Հայրապետին առ  
յայնժամեան Առաջնորդ Թեմիս Արքեպիսկոպոսն  
Սարգիս՝ ստիպեցին զիս զրել զիմ կարծիս վասն  
յիշեալ տետրակաց. և որպէս ինձ թուի՝ այն նա-  
մակ անհաճոյ իմն թուեցաւ յաչս հանգուցեալ  
Հայրապետին, ըստ որում այն տետրակք հրա-  
տարակեցան առանց իրիք փոփոխութեան:

Զօրինակ նամակի իմոյ առ Ընդհանրական Հայ-  
րապետն ՚ի 26 - ն Սեպտեմբ. 1869 ամի, իբրու-  
մատենագրական յօդուած ընդ սմին առաքելով  
փ Խմբագրութիւնդ, խնդրեմ՝ եթէ արժան զա-  
տեսցի, հրատարակել յէջս պատուական Ամսագրիդ:

Հ. Արքեպիսկոպոսնց:

1870 թի 5 - ն Մայիս

Ի ՏՓԽԻՍ:

Գ Ա Շ Ա Ն Յ Թ Ո Ւ Գ Թ

**ՎԵՀԼՓԸՌ ԼԱՅՐԸՊԵՏ**

Անագանեցի զպարտեացս իմոց հասու-  
ցանել զսակ՝ ՚ի կատարումն Վեհանձնա-  
կան հրամանի Չերոյ վերազննութեամբ  
երկոցունց տետրակաց յօրինելոց ՚ի Չէնջ.  
սակայն աղաչեմ ներողամիտ լինել, հաւա-  
տացեալ աներկբայ, թէ կարի զօրաւորք  
էին խափանարարք՝ վաղ ընդ փոյթ կա-  
տարելոյ զՉեր հրաման և զիմ քաղցր  
պարտաւորութիւն:

Եւ ահա վստահացեալ ՚ի պատուէր  
Չեր, որ զօրէն նախատպին Չերոյ հրամա-  
նեցիք ինձ, յԱլիցի բան Չեր, այոն՝ այո՛, և  
ոչն՝ ոչ, զրեմ ՚ի կարծոյ, զոր ինչ միաք  
իմ և խորհուրդք թելադրեն, ոչ իբրև  
անյեղի ճշմարտութիւն, այլ իբրև կար-  
ծիք:

Նախ՝ երկդարեան իմն սովորութիւն  
մտեալ է յազգ մեր զհրաժարեալ կամ ըզ-  
հրաժարեցուցեալ պատրիարզունս կոչել  
,,նախկին Պատրիարզ,՝ որպէս ՚ի ճակատս  
երկուց յանձն եղեալ իմում վերազննու-  
թեան տետրակաց նշանակեալ է. այսօրի-  
նակ տիտղոս արտաքոյ իմն է յատկութեան  
լեզուի մերոյ և ՚ի նորոց ոմանց ներմու-  
ծեալ. զի բառդ նախկին՝ նշանակէ առաջին,  
հին, սկզբնական. ուրեմն նախկին Պատրի-  
արզ Առստանդնուպօլսոյ ոչ հրաժարեալքն  
են, այլ էր Յովակիմ Արք Ապիսկոպոսն,  
որ ՚ի Սուլթան Մեհեմէտէ կարգեցաւ ա-  
ռաջին Պատրիարզ Հայոց Պօլսոյ ՚ի 1461  
ամի Տեառն: Ըստ բուն կանոնաց լեզուիս  
պարտ է զրել՝ Էրէնճե Պատրիարզ, որպէս  
յաւետարանի Յովհաննու 9—13 " Եճին